

միաձնի կաթողիկոսութիւնն եւ խոստացաւ ի տարին 100 թուման մուղաղայ տալ ի դիւան թագաւորին . վասն որոյ եւ մեք չնորհեցաք նմա զիշխանութիւն կաթողիկոսութեան , զինա վարեացէ» (էջ 221) : Այսպէս թէ այնպէս , կը դրէ Գաւրիթեցի , «հարիւր թուման մուղաղայ եղաւ ի վերայ Մելքիսեթ կաթողիկոսին , որ տայր թագաւորին ամ յամէ . եւ ի նորին պատճառէ անկաւ մուղաղայն ի վերայ Ս . Աթոռոյն էջմիածնի . եւ մնաց Աթոռն ի ներքոյ դարալի» : Իսկ այս եղաւ «բեռն ծանր եւ լուծ տաժանելի եւ անուր անխղելի ի վերայ Ս . Աթոռոյն էջմիածնի ի գուր եւ ի տարապարտուց» :

Մելքիսեղեկ ազատեցաւ կապանքներէն . բայց տարին բոլորեցաւ եւ տարեկան հարիւր թուման պարտքը չէր հանգանակուած : Ծահը «ի թագաւորական ծառայից» ուղարկեց չորս պաշտօնեաներ , «ղուլեր» կոչուած , որպէս զի գանձեն զայն : Եւ որովհետեւ չկար առձեռն պատրաստ գումար , մնացին անոնք կաթողիկոսին գլխուն փորձանք . «նստէին ի վերայ կաթողիկոսին ծառայիւք եւ երիվարօք իւրեանց . եւ գամենայն պիտոյս իւրեանց եւ զայլ կարեաց ի կաթողիկոսէն առնուին» : Արքունի հրաման էր՝ կաթողիկոսը աչքէ զհանել . ուր ալ երթար անիկա՝ պիտի հետեւէին անոր «ղուլերը» . որոնք կը պահանջէին հացալիբ սեղան եւ կատարեալ գոհացում իրենց պէտքերուն : Բնականաբար այս ծախքերուն պիտի չբաւականանար ժողովրդեան օրինա-